ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

# ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գիտական գրականության մեջ իրավունքի ինստիտուտը բնորոշվում է որպես իրավական նորմերի համակցություն, որոնք կարգավորում են միասեռ հասարակական հարաբերությունները: Սեփականության հարաբերությունները կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերի միջոցով: Ուստի սեփականության իրավունքի ինստիտուտը ունի կոմպլեքսային բնույթ: Եվ այս պարագայում պետք է ուսումնասիրվի և բացահայտվի սահմանադրական իրավունքի դերը սեփականության հարաբերությունների կարգավորման հարցում, քանի որ այս հարցի շուրջ հետազոտությունները բավականին սակավաթիվ են: Սեփականության իրավունքը, որպես սահմանադրա-իրավական ինստիտուտ գիտական աշխատություններում նեղացվում և ներկայացվում է շատ աղքատիկ ձևով: Որոշ հեղինակներ թերագնահատում են սահմանադրական իրավունքի դերը սեփականության հարաբերությունների կարգավորման հարցում: Ե.Ա.Սուխանովը այս հարցի վերաբերյալ կարծիք է արտահայտել, որ սեփականության հարաբերությունները իրավաբանորեն կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով: Իրավական նորմերի համակցությունը, որոնք կարգավորում են սեփականության հարաբերությունները, ունեն համալիր, միջճյուղային բնույթ, որոնց հիմքն են կազմում անկասկած քաղաքացիական իրավունքի նորմերը:[1]

Այս տեսակետի հիմք է հանդիսացել այն փաստը, որ սեփականության իրավունքը առավել մանրամասնորեն կարգավորվում է քաղաքացիական իրավունքի կողմից: Այդ է պատճառը, որ առավել հաճախ սեփականության իրավունքը դիտվում է որպես քաղաքացիական իրավունքի ինստիտուտ:

Սակայն բերված տեսակետը թերի է այն առումով, որ անտեսված է սահմանադրության նշանակությունը սեփականության հարաբերությունների կարգավորման հարցում: Ավելի ճիշտ սխալ ծեով է մեկնաբանվում սահմանադրական իրավունքի տեղը սեփականության իրավունքը կարգավորող իրավունքի ճյուղերի շարքում: Ասել, որ սեփականության իրավունքի կարգավորման հարցում հիմք են հանդիսանում քաղաքացիական իրավունքի նորմերը, կնշանակի նվազեցնել սեփականության իրավունքի դերն ու նշանակությունը: Ճիշտ կլինի ասել, որ սեփականության հարաբերությունների կարգավորման հիմք են հանդիսանում սահմանադրական իրավունքի նորմերը, սակայն առավել մանրամասն սեփականության իրավունքը կարգավորվում է քաղաքացիական իրավունքի կողմից:

Հետաքրքիր է այս հարցի կապակցությամբ բերել նույն Ե.Սուխանովի կարծիքը այն մասին, որ իրավունքը առաջանում է հենց սեփականության հարաբերությունների պաշտպանության համար: Այդպիսի պաշտպանությունը կազմում է տնտեսական հարաբերությունների կարգավորման իրավական բովանդակությունը, իսկ սեփականության իրավունքը այդ տեսանկյունից դառնում է ամբողջ իրավական համակարգի կենտրոնական ինստիտուտներից մեկը:[2]

Այո, սեփականությունը հանդիսանում է իրավական համակարգի կենտրոնը և սեփականության սահմանադրա-իրավական կարգավորումից է կախված այդ իրավունքի հետագա կարգավորումը իրավունքի այլ ճյուղերի կողմից: Եվ այդ պարագայում սխալ է սեփականության իրավունքը համարել միայն քաղաքացիական իրավունքի ինստիտուտ եվ քաղաքացիական իրավունքը բնորոշել որպես սեփականության հարաբերությունների կարգավորման հիմնական իրավունքի ճյուղ: Ճիշտ կլինի ասել, որ սեփականության իրավունքը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի ինստիտուտ, որի հիմքերը ամրագրվում են սահմանադրական իրավունքի կողմից:

Սեփականությունը, որպես սահմանադրական իրավունքի ինստիտուտ, առաջ է եկել, համեմատաբար, ոչ այդքան վաղ: Սեփականության իրավունքի ինստիտուտը ընդհանրապես ենթադրում է իրավական նորմերի համակցություն, որոնք կարգավորում են սեփականության հարաբերությունները ամբողջ

ծավալով՝ այսինքն սեփականության իրավունքի հասկացությունը, ձեռք բերումը, սեփականատիրոջ իրավազորությունները, սեփականատիրոջ կողմից դրանց իրականացնելու մեխանիզմները, սեփականության իրավունքի պաշտպանությունը, սեփականության իրավունքի դադարումը: Իհարկե, հարաբերությունների այս ծավալը չի կարգավորվում սահմանադրությամբ: Սահմանադրական մակարդակով սեփականության իրավունքի ամրագրումը ունի որոշակի առանձնահատկություններ: Յ.Լազարի կարծիքով. «Յուրահատուկ հիմնախնդիր է սեփականության հասկացությունը սահմանադրաիրավական առումով»: Այն բուրժուական սահմանադրական իրավունքի մասնագետների կողմից զարգացվում է այսպես կոչված սեփականության երաշխիքների առումով՝ սեփականատեր-պետություն հարաբերությունների համար:[3] Սեփականության հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ խոսք չի գնում սեփականության հարաբերությունների ողջ ծավալի կարգավորման մասին: Խոսքը գնում է սեփականության հարաբերությունների նվազագույն անհրաժեշտ ծավալի կարգավորման մասին: Սահմանադրական իրավունքի կողմից կարգավորվում են սեփականության իրավունքին վերաբերվող այնպիսի հիմնարար հարցեր, ինչպիսիք են սեփականության իրավունքի ճանաչումը և պաշտպանությունը, սեփականության բոլոր ձևերի հավասարության սկզբունքի ամրագրումը, հողի նկատմամբ սեփականության իրավունքի առանձնահատկությունները և այլն:

Հիմնահարցը կայանում է նրանում, որ սահմանադրական իրավունքը, հանդիսանալով իրավունքի առաջատար ճյուղ, ամբողջությամբ չի կարգավորում սեփականության հարաբերությունների այն ծավալը, որը ներառում է սեփականության իրավունքին վերաբերվող կարևորագույն հարցերը: Սեփականության իրավունքի մասին քիչ է խոսվում սահմանադրության, և հետևաբար նաև սահմանադրության իրավունքի դասագրքերում և գիտական աշխատություններում: Եվ դա այն պարագայում, երբ բազմաթիվ մտածողներ սեփականության իրավունքը և դրա պաշտպանությունը դիտում են որպես պետության ստեղծման պատճառներից մեկը: Գիտնականների մեծ մասը հետևում են այն տեսակետին, որ սեփականության իրավունքը քաղաքացիական իրավունքի

ինստիտուտ է և կարևորագույն հարցերի լուծումը թողնում են քաղաքացիական իրավունքին: Այդուհանդերձ մենք կարծում ենք, որ անհրաժեշտ է հիմք ընդունելով միջազգային փորձը և առաջադեմ մի շարք գիտնականների աշխատությունները, բարձրացնել սեփականության իրավունքի դերն ու նշանակությունը սահմանադրական իրավունքի առումով:

Սեփականության իրավունքը (օբյեկտիվ առումով), որպես սահմանադրական իրավունքի ինստիտուտ իրենից ներկայացնում է սահմանադրաիրավական նորմերի ամբողջություն, որոնք կարգավորում են սեփականության հարաբերությունները:

Սեփականության իրավունքը ՀՀ սահմանադրությունում ամրագրված է իրավական նորմերում, որոնք կազմում են սահմանադրության 8, 28, և 35-րդ հոդվածների բովանդակությունը: Սեփականության վերաբերյալ նշում է պարունակվում սահմանադրության 89-րդ հոդվածում: Սեփականության իրավունքը պետության հիմնական օրենքում ամրագրված է երկու իմաստով՝ որպես հասարակության (պետության) տնտեսական համակարգի կարևորագույն տարր և որպես մարդու և քաղաքացու իրավունք:

Դիտարկենք, ինչ ծավալով և կարգով է սեփականության իրավունքը ամրագրված ՀՀ սահմանադրության մեջ:

ՀՀ սահմանադրության 8-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, սեփականատերը իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը»: Սահմանադրությունը ամրագրում է սեփականատիրոջ այդ երեք իրավազորությունները, որոց միջոցով արտահայտվում է սեփականության իրավունքը:

Փաստորեն սահմանադրության հիշյալ նորմում տրված է նաև սեփականության իրավունքի հակիրճ բնորոշում՝ երեք իրավազորությունների միջոցով: «Սեփականատերը իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը:» Սահմանադրական նորմում պարունակվող այս սեղմ նախադասության մեջ է արտահայտվում սեփականության իրավունքի բնորոշումը, որի վրա են հիմնված սեփականությանը և սեփականության իրավունքին վերաբերվող օրենսդրական և ենթաօրենսդրական

ակտերը: Դրան հետևելով քաղաքացիական օրենսգրքում ևս սեփականությունը ամրագրում է որպես «սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված և պաշտպանվող իրավունք՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը»: Խնդիրը կայանում է նրանում, որ սահմանադրությունը, չամրագրելով սեփականության իրավունքի հասկացությունը կամ թերի ամրագրելով այն, իրավունքի մյուս ճյուղերի համար պատշաճ հիմք չի ստեղծում այդ իրավունքի պաշտպանությունը ապահովելու համար: Կարելի է սեփականության իրավունքը սահմանադրության 1-ին գլխում հետևյալ կերպ ամրագրել. «Սեփականության իրավունքը, որպես գույքի նկատմամբ բացառիկ և առավել մեծ իշխանություն, ճանաչվում և պաշտպանվում է»: Այս դեպքում նախ ամրագրվում է սեփականության իրավունքի հասկացությունը: Օրենսդիրը և պետական մարմինները սեփականության իրավունքի տակ կհասկանան սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով պաշտպանվող հնարավորությունը գույքի նկատմամբ կատարել օրենքով չարգելված ցանկացած գործողություն: Բացի դրանից կամրագրվի սեփականության իրավունքի բացառիկ բնույթը, ինչը նշվում է բազմաթիվ հեղինակների կողմից որպես մի հատկանիշ, որը տարբերում է սեփականատիրոջը գույքի նկատմամբ իրավազորություններ ունեցող այլ սուբյեկտներից:

Սահմանադրության առաջին գլուխը, ճանաչելով և ամրագրելով սեփականության իրավունքը, տալիս է ոչ միայն նրա հիմնական հատկանիշները, այլ սահմանում է նաև սեփականության իրավունքի սահմանները: Այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է իրականացվի (իրացվի) սեփականության իրավունքը: Ճանաչելով սեփականության իրավունքը, Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը միևնույն ժամանակ ելնում է միջազգային իրավունքի այն հանրաճանաչ սկզբունքից, որ չկա բացարձակ ազատություն և բացարձակ իրավունքներ, նրանք կարող են սահմանափակվել, բայց միայն օրենքի հիման վրա և սահմանադրությամբ ամրագրված սահմաններով և նպատակների համար:

Սեփականության իրավունքի առաջին և գլխավոր սահմանափակումը կայանում է նրանում, որ ըստ սահմանադրության «սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին , խախտի

այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը»: Այս նորմի բովանդակությունից պարզ է դառնում, որ ՀՀ սահմանադրությունը սեփականության իրավունքը չի դիտում որպես բացառիկ մի իրավունք, որը չի կարելի ոչ մի ձևով սահմանափակել: Ի տարբերություն բազմաթիվ երկրների, որտեղ սեփականության իրավունքին ձևականորեն «անձեռնմխելի» կարգավիճակ է տրված, Հայաստանի Հանրապետությունում այդ իրավունքը, պահպանելով միջազգային իրավունքի սկզբունքները, ճանաչվում և պաշտպանվում է որոշակի օրենսդրական սահմանների շրջանակներում:

ՀՀ սահմանադրությունը հետևում է միջազգային իրավունքի այն սկզբունքին, որ անձի իրավունքները սահմանափակված են այլ անձանց իրավունքներով, այսինքն չի թույլատրվում իրավունքների չարաշահում դրանց օգտագործումը այլ անձանց վնաս պատճառելու նպատակով: Այսպիսով Հայաստանի սահմանադրությունը «Սեփականատիրոջ հայեցողությունը» դնում է որոշակի սահմանների մեջ: Եվ պատմական փորձը վկայում է, որ այդ սահմանները հասարակության զարգացման հետ, ավելի են նեղանում: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ հասարակությունը հասկացել և ընդունել է դարերի ընթացքում իր զարգացումը ստացած սեփականության սոցիալական դերը: Այդ իսկ պատճառով ՀՀ սահմանադրությունը բացի սեփականության իրավունքի և դրա պաշտպանությանը վերաբերվող նորմերի սահմանումից, ամրագրում է նաև սեփականության իրավունքի և մասնավորապես մասնավոր սեփականության սոցիալական դերը:

Ենթադրվում է, որ սեփականության իրավունքի իրականացումը ոչ միայն չպետք է վնաս պատճառի և խախտի այլ անձանց, հանրության և պետության շահերը, այլ պետք է ծառայի ընդհանուր բարիքներին: Որոշ երկրների սահմանադրություններում դա բառացիորեն նշված է: Մասնավորապես Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրությունը պարունակում է համապատասխան նորմ. «Սեփականությունը պարտավորեցնում է: Սեփականության իրավունքից օգտվելը պետք է միաժամանակ ծառայի ընդհանուր բարեկեցությանը»: Իսպանիայի սահմանադրությունը ամրագրում է, որ «Երկրի ամբողջ կարողությունը, անկախ սեփականության ձևից, պետք է ծառայի (պետք է ստորադաս լինի) ընդհանուր շահերին, ընդհանուր

բարեկեցությանը»: Ուկրաինայի սահմանադրության 13-րդ հոդվածը հռչակում է. «Սեփականությունը պարտավորեցնում է: Սեփականությունը չպետք է օգտագործվի ի վնաս մարդու և հասարակության»: Նմանատիպ դրույթներ են պարունակվում նաև Իտալիայի 1947, Պորտուգալիայի 1976, Բրազիլիայի 1988 սահմանադրություններում:

Սեփականության իրավունքի սահմանադրորեն ամրագրելու հարցը քննարկելիս պետք է անդրադառնալ նաև այն հարցին, թե պետք է արդյոք սահմանադրության մեջ նշել սեփականության իրավունքի սահմանափակումները: Արդյոք դա չի խանգարի սեփականության իրավունքի ճիշտ ընկալմանը և ամրագրմանը: Մասնավորապես Դ.Ի Մեյերի կարծիքով հենց այդ սահմանափակումներն են խանգարում մեզ հասկանալ և ընդունել սեփականության իրավունքը՝ որպես գույքի նկատմամբ առավել մեծ իշխանության:[4] Փաստորեն Դ.Մեյերը գտնում է, որ սեփականության իրավունքի սահմանափակումները կարող են ապակողմնորոշել մեզ սեփականության իրավունքի ճիշտ ընկալման հարցում: Սակայն գիտնականը չի գտնում, որ սեփականության իրավունքի սահմանափակումները պետք է չլինեն: «Սեփականության իրավունքի բնորոշումից արդեն իսկ երևում է, որ սեփականության իրավունքը ենթակա է սահմանափակումների: Ընդհանրապես սահմանափակումները ուղեկցում են սեփականության իրավունքին»[5]: Այս հարցը քննարկելիս պետք է անդրադառնալ նախ սեփականության իրավունքի ժամանակակից հայեցակարգին, ինչպես նաև սեփականության իրավունքի սահմանադրա-իրավական ամրագրման առանձնահատկություններին: Սեփականության իրավունքի ժամանակակից հայեցակարգի համաձայն սեփականության իրավունքը չի հանդիսանում անսահմանափակ իրավունք: Սեփականության իրավունքը, որպես «իրավունք», իրենից ներկայացնում է սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների և պարտավորությունների ամբողջություն: Այդ իսկ պատճառով սեփականության իրավունքի սահմանափակումների ամրագրումը միայն արտացոլում է սեփականության իրավունքի ներկայիս վիճակը: Հաշվի առնելով սեփականության իրավունքի սահմանադրա-իրավական ամրագրման առանձնահատկությունները, պետք է նշել, որ պետությունների մեծամասնությունը գերադասել են սահմանադրորեն ամրագրել նաև սեփականության

իրավունքի սահմանափակումները և սեփականատիրոջ պարտականությունները: Սահմանադրորեն սեփականության իրավունքի սահմանափակումները չամրագրելը կբերի նրան, որ այն հնարավոր չի լինի սահմանափակել նաև օրենքներում: Դ.Մեյերի առաջարկը, այսինքն սեփականության իրավունքի «մաքուր» տեսքով ներկայացումը, կարելի է կիրառել միայն տեսականորեն՝ գիտական աշխատություններում, հասկանալու համար սեփականության իրավունքի էությունը:

Ի տարբերություն մի շարք ժողովրդավարական երկրների, ՀՀ սահմանադրությունը չի նշում սեփականության կոնկրետ ձևերը, այլ օգտագործված է «սեփականության բոլոր ձևեր» հասկացությունը: Դա նշանակում է, որ սեփականության կոնկրետ ձևերը և դրանց կարգավիճակը պետք է սահմանվեն օրենսդրի կողմից ավելի ցածր օրենսդրական մակարդակով: Այն փաստը, որ ՀՀ սահմանադրությունը չի նշում սեփականության կոնկրետ ձևերը, սեփականության իրավունքի զարգացման, անհրաժեշտության դեպքում սեփականության նոր ձևերի առաջացման և զարգացման համար նախադրյալներ է ստեղծում: Գիտատեխնիկական առաջընթացը անհրաժեշտության դեպքում բերում է «սեփականության իրավունքի նոր ձևերի առաջացմանը»[6]: Սահմանադրության մեջ սեփականության կոնկրետ ձևերի սպառիչ ցանկ չնշելու դեպքում հետագայում անհրաժեշտություն չի առաջանա փոփոխություններ մտցնել փոփոխման կոշտ ռեժիմ ունեցող հիմնական օրենքում:

ՀՀ սահմանադրությունը հավասար իրավական ռեժիմ է սահմանում պետական, մասնավոր, կոլեկտիվ և այլ սեփականության ձևերի համար: Սահմանադրության մեջ ամրագրված է. «Պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը»: Պատմության դասերը վկայում են, որ սեփականության բազմաձևության հիմքի վրա խարսխված ազատ շուկայական տնտեսական հարաբերությունները այլընտրանք չունեն: Դրանք հասարակության ակտիվ և ներդաշնակ զարգացման գլխավոր նախապայմանն են:[7]

Այս նորմը ուսումնասիրելիս պետք է նշել, որ սեփականության իրավունքը այստեղ ամրագրված է որպես հասարակության (պետության) տնտեսական

համակարգի կարևորագույն տարր: Պետության տնտեսական համակարգը իրենից ներկայացնում է այն ռեալ բազիսը, որի վրա է կառուցվում ողջ քաղաքական վերնաշենքը և այդ թվում պետական մարմինները, իսկ «պետության տնտեսական համակարգ» հասկացության մեջ են մտնում սեփականության բոլոր ձևերը: Տնտեսական հարաբերությունների սահմանադրա-իրավական կարգավորումը ներառում է նաև սեփականության, բաշխման, աշխատանքի բնագավառում հարաբերությունների կարգավորումը: Ժամանակակից սահմանադրությունները պարունակում են հատուկ գլուխներ կամ բաժիններ, որոնք նվիրված են տվյալ հարցերին: Օրինակ «տնտեսական և սոցիալական քաղաքականության հիմնախնդիրների մասին» Իսպանիայի 1978թ. սահմանադրությունում, «Տնտեսական և սոցիալական կարգի մասին»: Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը այդ նպատակի համար առանձին գլուխ չի նախատեսվում: Տնտեսական համակարգի հիմքերը ամրագրված են սահմանադրության 1-ին գլխում՝ որպես Սահմանադրական կարգի հիմունքներ:

Մինչև 2-րդ համաշխարհային պատերազմը ընդունված սահմանադրությունները հիմնականում սահմանափակվում էին հասարակական կարգի երկու կարևորագույն տարրերի կարգավորմամբ: Դրանցից էին՝ պետական իշխանության մարմինների համակարգի կազմակերպումը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները: 2-րդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված սահմանա-դրությունները էականորեն ընդլայնեցին սահմանադրության կարգավորման առարկան՝ նրա մեջ ներառելով երկրի սոցիալ-տնտեսական համակարգի հիմնահարցերի կարգավորումը: Դա պայմանավորված էր նրանով, որ օրենսդիրը կարևորեց սահմանադրության մակարդակով պետության տնտեսական համակարգի կարգավորման հարցը, քանի որ պետության տնտեսական համակարգն է պայմանավորում ամբողջ քաղաքական վերնաշենքը: Սեփականության իրավունքն է հանդիսանում այն կարևորագույն իրավունքը, որի վրա են հիմնված երկրի տնտեսական համակարգի կարգավորմանը վերաբերվող այլ սահմանադրա-իրավական նորմերը: Սեփականության իրավունքն է կանխորոշում տվյալ երկրի տնտեսական համակարգի տեսակը:

Ժամանակակից աշխարհում գոյություն ունեն տնտեսավարման երկու տարբեր մոդելներ կապիտալիստական (կամ շուկայական) և սոցիալիստական (կամ տոտալիտար): Ընդ որում տնտեսության սոցիալիստական մոդելի հիմքում ընկած է պետական սեփականության գերիշխման սկզբունքը, այն դեպքում երբ տնտեսության շուկայական մոդելի հիմքում ընկած է սեփականության ձևերի հավասարությունը, սեփականության ձևերի հավասար իրավական պաշտպանության սկզբունքը: Շուկայական տնտեսության պայմաններում սահմանադրության մակարդակով տնտեսական հարաբերությունների կարգավորման հիմքում ընկած են երկրի ինքնիշխանության, սեփականության ձևերի,՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսա-կան մրցակցության, շրջակա միջավայրի պաշտպանության, մարդու աշխատանքի իրավունքի պաշտպանության, սոցիալական պաշտպանվածության սահմանադրական սկզբունքները[8]:

Շուկայական տնտեսության պայմաններում հռչակվում է ձեռնարկատիրական գործունեության ազատություն, իսկ պետության միջամտությունը շուկայական հարաբերություններում սահմանափակվում է հասարակության համար անհրաժեշտ սահմաններում: Արևմտյան երկրների սահմանադրություններում շատ հաճախ հռչակվում է սեփականության անձեռնմխելիություն: Սակայն հաճախ են դարձել սեփականության բացարձակ անձեռնմխելիության գաղափարից ետ կանգնելու դեպքերը: Դա պայմանավորված է նրանով, որ սեփականության անձեռնմխելիության պայմաններում հնարավոր չէ պետության նույնիսկ փոքր ծավալով միջամտությունը երկրի տնտեսական կյանքին: Եվ դա այն պայմաններում, երբ գիտականորեն ապացուցված է փոքր չափով և գիտականորեն հիմնավորված ձևերով պետության միջամտության անհրաժեշտությունը երկրի տնտեսական կյանքին վերաբերվող հարցերին: Ժամանակակից զարգացած պետություններից շատերը արդեն չեն առաջնորդվում մաքուր շուկայական հարաբերությունների գաղափարով: Կրճատվել է նաև այն պետությունների թիվը, որոնք հիմնված են միայն վարչա-հրամայական համակարգի վրա: Ժամանակակից պետության տնտեսության զարգացումը պլանավորվում է, հիմնվում է ազատ շուկայական հարաբերությունների և տնտեսության պետական կարգավորման զուգակցման սկզբունքի վրա:

Սեփականության իրավունքը, որպես հասարակության տնտեսական համակարգի հիմք, ամրագրված է պետության տնտեսական համակարգի այլ կարևոր տարրի՝ ազատ տնտեսական մրցակցության սկզբունքի հետ միասին: Դա պայմանավորված է նրանով, որ ազատ տնտեսական մրցակցությունը հանդիսանում է տնտեսության զարգացման հիմքը: Իսկ ազատ տնտեսական մրցակցության մասին խոսք լինել չի կարող այն տնտեսությունում, պետությունում, որտեղ ապահովված չէ սեփականության բոլոր ձևերի հավասարությունը և հավասար իրավական պաշտպանությունը: Սեփականության իրավունքը հանդիսանում է մրցակցության բնական աղբյուրը:[9] Առանց սեփականության բազմաձևության հիման վրա կառուցված տնտեսության հնարավոր չէ ապահովել տնտեսությունում ազատ տնտեսական մրցակցություն:

Նույն ձևով սեփականության ձևերի հավասարությունը հանդիսանում է տնտեսական գործունեության ազատության հիմքը: Սեփականությունը այն կարևորագույն տարրն է, որը պետք է և կարող է ներդրվել տնտեսական և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար:

Դա մատնանշում է սեփականության իրավունքի և ազատ տնտեսական մրցակցության կապի մասին, ինչի հիման վրա նրանք միավորված են սահմանադրության մեկ հոդվածում: Սակայն սեփականության իրավունքի և ազատ տնտեսական մրցակցության կապը հակադարձ է: Ազատ տնտեսական մրցակցության սկզբունքը հանդիսանում է հակամենաշնորհային օրենսդրության սահմանադրա-իրավական հիմքը: Եվ հենց հակամենաշնորհային օրենսդրության հետ են կապված սեփականության իրավունքի որոշ սահմանափակումներ: Կապված դրա հետ սեփականության որոշ օբյեկտներ կարող են գտնվել միայն պետական սեփականության ներքո (Օրինակ Իսպանիայի սահմանադրության համաձայն ծովային գոտիները, ծովափը, բնական պաշարները, կոնտինենտալ շելֆը): Սակայն շատ պետություններում այդպիսի սահմանափակում չկա: Մասնավորապես ԱՄՆ-ում մասնավոր սեփականության ներքո են գտնվում որոշ ատոմային և հրթիռաշինական գործարաններ:

Սահմանադրությամբ ամրագրված սեփականության բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանության և զարգացման սկզբունքը երաշխիք է

հանդիսանում նաև մարդու իրավունքների ապահովման հարցում: Նախ այդ սկզբունքին հետևելով, սահմանադրության 28-րդ հոդվածը սեփականության իրավունքը հռչակում է որպես մարդու և քաղաքացու իրավունք: Բացի դրանից սեփականության բոլոր ձևերին հավասար կարգավիճակ տալը նպաստում է աշխատանքի շուկայում մրցակցության առաջացմանը, ինչը մարդու աշխատանքային իրավունքների երաշխիք է հանդիսանում: Խորհրդային շրջանում մասնավոր սեփականության վերացումը բերեց նրան, որ պետությունը դարձավ արտադրության միջոցների միակ սեփականատերը և բնականաբար միակ գործատուն, որը կարող էր թելադրել աշխատանքի ցանկացած պայմաններ, ցանկացած աշխատատեղ և աշխատավարձ: Այդ ժամանակաշրջանում բացառվում էր հասարակ մրցակցությունը աշխատանքային իրավունքի բնագավառում, բացառվեց նաև անհատի կողմից գործատուի ընտրության հնարավորությունը: Սեփականության բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանությունը ամրագրելով, սահմանադրությունը երաշխավորում է, որ վերանում է պետության մենաշնորհը աշխատանքի շուկայում:

Սեփականության բոլոր ձևերի համար հավասար իրավական ռեժիմ սահմանելը մեծ փոփոխություն է օրենսդրության մեջ Հայաստանի խորհրդային շրջանի հետ համեմատ: Ինչպես հայտնի է ԽՍՀՄ-ում սեփականության ձևերի նկատմամբ նման մոտեցում լինել չէր կարող: ԽՍՀՄ-ում մասնավոր սեփականության իրավունքը բացառվում էր: Առավելությունը տրված էր պետական, իսկ այնուհետև կոլեկտիվ սեփականության ձևերին: ԽՍՀՄ 1936 թվականի սահմանադրությունը ոչ միայն չէր պարունակում մասնավոր սեփականության վերաբերյալ որևէ նշում, այլև ամրագրում էր այն օբյեկտների շրջանակը, որոնք կարող էին գտնվել անձնական սեփականության ներքո:[10] Մասնավոր սեփականությունը ոչ միայն չէր պաշտպանվում, այլ պետությունը տարբեր մեխանիզմների միջոցով միջոցներ էր ձեռնարկում՝ քայլ առ քայլ մասնավոր սեփականության մնացած չնչին մի մասը պետականի վերածելու համար: Նույնիսկ ներկայումս, երբ աշխարհում վիճակը կտրականապես փոխվել է, ամենախոշոր սոցիալիստական պետությունը փլուզվել է, նախկին սոց. ճամբարի երկրներում սեփականության ձևերի հավասարության մասին խոսք լինել անգամ չի կարող: Օրինակ՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետու-

թյան սահմանադրությունը, կամ Կորեայի Ժողովրդական Հանրապետության սահմանադրությունը պետական և կոլեկտիվ սեփականության ձևերին տրամադրել են արտոնյալ պայմաններ: Ճիշտ է, վերջին տարիներին այդ երկրներում արագ տեմպերով ստեղծվում են մասնավոր սեփականության վրա հիմնված ձեռնարկություններ, սակայն տնտեսության մեջ վճռորոշ դերը պատկանում է պետական և կոլեկտիվ սեփականության ձևերին: Օրինակ Չինաստանի սահմանադրության մեջ հռչակված է, որ «սոցիալիստական հասարակական սեփականությունը սուրբ և անձեռնմխելի է, պետությունը պաշտպանում է սոցիալիստական հասարակական սեփականությունը, ցանկացած կազմակերպությանը կամ անհատին արգելվում է յուրացնել կամ ինչ որ ձևով վնաս տալ պետական կամ կոլեկտիվ սեփականությանը»: Այսպիսով սոցիալիստական պետություններում առավելությունը տրված էր կոլեկտիվ կամ պետական սեփականությանը: Ի տարբերություն դրա, ներկայումս մի շարք պետությունների սահմանադրությունները առավելություն են տալիս մասնավոր սեփականությանը: Օրինակ Բուլղարիայի սահմանադրության մեջ նշված է «Բուլղարիայում սեփականությունը հանրային և մասնավոր է: Մասնավոր սեփականությունը անձեռնմխելի է»: Նույնանման անհավասարություն է սահմանված նաև Ռումինիայի սահմանադրության մեջ:

Ի տարբերություն այս երկու մոտեցումների ՀՀ սահմանադրությունը , ինչպես նաև շուկայական տնտեսության վրա հիմնված բազմաթիվ այլ պետությունների սահմանադրություններում ամրագրված է սեփականության բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանությունը և հավասար զարգացման երաշխիքներ: Այս սկզբունքը իր հետագա զարգացումն է ստանում այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում՝ Քրեական օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում և այլն: Սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանության սկզբունքը արտահայտվում է նրանում, որ սեփականության նկատմամբ ոտնձգությունները, անկախ այն հանգամանքից, թե ով է սեփականության իրավունքի սուբյեկտը, պատժվում է հավասարապես:

Բացի դրանից այդ սկզբունքի ամրագրումը նշանակում է, որ սեփականության իրավունքի բոլոր սուբյեկտներին պետք է հավասար հնարա-

վորություններ ընձեռվեն իրենց սեփականության իրավունքի ինքնապաշտպանության համար: Վերը նշված սահմանադրահիրավական նորմի գաղափարական հիմք կարելի է համարել Լեյսների այն կարծիքը, որ «Սեփականության ցանկացած ձևի նկատմամբ ցանկացած հարված հասցվում է բոլոր սեփականատերերին, արժեզրկում է ամբողջ սեփականությունը, ոչ ոք ամենափոքր սեփականատերերից նույնիսկ չի կարող իմանալ, երբ է գալու իր հերթը, որը որպես կանոն, անխուսափելի է»:[11] Ի տարբերություն դրան Խորհրդային շրջանում պետական սեփականության դեմ կատարված ոտնձգության համար սահմանվում էր ավելի խիստ պատիժ քան սեփականության այլ ձևերի նկատմամբ ոտնձգություն կատարելու համար: Մասնավորապես խորհրդային շրջանում քրեական օրենսգրքով սոցիալիստական սեփականության հափշտակության կամ վնաս պատճառելու դեպքում պատիժը ավելի խիստ էր սահմանվում, քան սեփականության այլ ձևերի հափշտակության դեպքում: Նույնանման խոչընդոտների էր հանդիպում մասնավոր սեփականության սուբյեկտը իր իրավունքների պաշտպանությունը իրականացնելիս:

Սեփականության բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանության սկզբունքը ենթադրում է նաև, որ օրենսդրորեն պետք է բացառվի սեփականության պետական ձևի վրա հիմնված ձեռնարկությունների և կազմակերպությունների տնտեսվարմանը վերաբերվող որևիցէ արտոնության տրամադրումը: Հեղինակներից մեկը նույնիսկ ի հաստատումն սեփականության բոլոր ձևերի հավասարության սկզբունքի առաջարկում է սահմանադրություններում ներառել մի նորմ, որը պետք է հռչակի. «Չի թույլատրվում ձեռնարկությունների պետական խտրականություն՝ սեփականության ձևի հիման վրա»: Օգնության (խրախուսման) ցանկացած ձևեր, որոնք տրամադրվում են պետական ձեռնարկություններին, պետք է հասանելի լինեն նաև մասնավոր ձեռնարկություններին:[17]

---

1. Суханов Е.А, Лекции о праве собственности, М., 1991, стр 17
2. Суханов Е.А. Лекции о праве собственности, М., 1991, стр.13
3. Ян Лазар, Собственность в буржуазной правовой теории,М, 1985 с. 54

4. Мейер Д.И. Русское гражданское право, по исправленному и дополненному 8-му изд., 1902 Изд, 2-е, испр.М.:,,Статут'', 2000.,стр 346
5. Мейер Д.И. Русское гражданское право, по исправленному и дополненному 8-му изд., 1902 Изд, 2-е, испр.М.:,,Статут'', 2000.,стр 346
6. Иойрыш А. Атом и право, М, 1969, стр. 124
7. Տիտ. ըստ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք- ԵՊՀ, 2000թ.
8. Տ.Կ.Բարսեղյան. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, ԵՊՀ. Ե, 2000, էջ156:
9. ,,Экономические проблемы в Конституции РФ, Направления возможного уточнения и доработки'' В.Мау, Конституционное право, Восточноевропейское обозрение, N 3 (28) 1999г. Стр 181
10. Инга Михайловская ,, Генезис социально-экономических прав и их влияние на формирование посттоталитарных систем'' Конституционное право Восточноевропейское обозрение N 1(30) 2000 г. Стр. 146
11. Ян Лазар, Собственность в буржуазной правовой теории , М, 1985, стр 62, նաև տես Issing O., Leisner W., Op. cit., s 88
12. ,, Экономические проблемы в Конституции РФ, Направления возможного уточнения и доработки'' В.Мау, Конституционное право, Восточноевропейское обозрение, N 3 (28) 1999г. Стр 181